

Հիփոթեքային ճգնաժամ. Ներագրում այլ ոլորտների

Արմինե Հակոբյան, «Գլոբալ Էս-Փի-Սի» գլխավոր տնօրեն

Ինչպես և սպասում էին ֆինանսիստները, ԱՄՆ-ում հիփոթեքային վարկերի երկրորդային (subprime) շուկայի հիմնախնդիրները սկսում են տարածվել վարկային քարտերի շուկայի վրա: Associated Press-ի կողմից հրապարակված տվյալների համաձայն 2007թ.-ին խոշորագույն բանկերի վարկային քարտերի 30 օրից ավել ժամկետանց պարտավորությունները աճել են 26%-ով և գերազանցել են 17 մլրդ ԱՄՆ դոլար ծավալը, իսկ դեֆոլտները՝ 18%-ով և մոտեցել են 1 մլրդ ԱՄՆ դոլարի:

Այս ցուցանիշները ուղղակիորեն կապված են հիփոթեքային շուկայի զարգացումների հետ՝ ամերիկացիները չեն կարողանում վերագրավադրել իրենց տները, քանի որ բանկերը գերծ են մնում ոչ բարձր վարկունակություն ունեցող փոխառուների վարկավորումից: Ինչպես նշում են վերլուծաբանները, իրավիճակը կարող է ավելի սրվել Նոր Տարվա տներից հետո, երբ կգա կատարված ամանորյա գնումների համար վճարումների պահը:

Associated Press-ը վերլուծել է 325 մլն հաշիվների տվյալներ, որոնք բանկերը ստեղծել էին հետազայում դրանք ներդրողներին վաճառելու նպատակով՝ հիփոթեքային վարկերի արժեթղթավորման օրինակով:

Համաձայն ԱՄՆ Արժեթղթերի և Բորսաների Հանձնաժողովի հաշվետվության՝ 17 խոշորագույն ընկերությունների ավելի քան 30 օր ժամկետանց վճարումների ընդհանուր գումարը մեկ տարվա ընթացքում աճել է 26%-ով և 2007թ. հոկտեմբերին հասել է 17.3 մլրդ ԱՄՆ դոլարի: Դեֆոլտների ծավալը կազմել է 961 մլն ԱՄՆ դոլար: Առավել հատկանշական է 90 օր ժամկետանցների կտրուկ աճը այնպիսի խոշոր բանկերի մոտ, ինչպիսիք են Advanta, GE Money Bank և HSBC բանկերը՝ մոտ 50% աճ նախորդ տարվա նկատմամբ:

Մինչև վերջերս վարկային քարտերի դեֆոլտների քանակը եական չէր և քարտային բիզնեսը բանկերի համար այն փոքրաքանակ հնարավորություններից էր, որի միջոցով վերջիններս շարունակում էին գումար վաստակել ի շնորհիվ բարձր տոկոսադրույթների, որոնք որոշ դեպքերում գերազանցում էին 35% տարեկան տոկոսադրույթը, ինչպես նաև լրացուցիչ միջնորդավճարների և տուգանքների:

Ինչպես նշում են մասնագետները, փոխառուների վիճակի վատթարացումը մեծապես պայմանավորված է ԱՄՆ հիփոթեքային շուկային հիմնախնդիրներով: Եթե նախկինում պարտապանները կարող էին հայթայթել լրացուցիչ միջոցներ՝ ուղղակի վերագրավադրելով իրենց տները, ապա ներկայումս բանկերը իրենց իրացվելիության պահանջարկի պատճառով չեն ցանկանում գործ ունենալ համեմատաբար կասկածելի փոխառուների հետ: Այս պարագայում տուժում են նաև համեմատաբար հուսալի վարկունակությամբ ամերիկացիները: Իրենք այլևս չեն կարող հույս դնել «Մասնկության մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն ժամկետանց պարտավորության ամբողջական ներման և դուրսգրման հնարավորության վրա: Այդ հոդվածը նախատեսում էր, որ եթե փոխառուն նախորդ վարկի պարտավորություններով պայմանավորված հասել է սնանկության, ապա նա ազատվում էր այդ վարկի գծով բոլոր պարտավորություններից: Հաջորդ վարկը տրամադրվում էր «գրոյական վարկային պատմության» հիմքով: 2005թ.-ին կատարված փոփոխությունների արդյունքում քաղաքացիներից պահանջվում է ներկայացնել պարտքերի մարման ժամանակացույց, ինչը բարդեցնում է վերջիններիս համար դեֆոլտից փրկվելու հնարավորությունը:

Այսպիսի իրավիճակը շատերին պետք է ստիպի մտածել ամերիկյան տնտեսության ընդհանուր վիճակի մասին:

Մասնագետները կարծում են, որ տների սեփականատերերից շատերի ֆինանսական վիճակի վատթարացումը հիփոթեքային վարկերի երկրորդային (subprime) շուկայի ճգնաժամի պատճառով կարող է շրջայապես բերել ԱՄՆ ոչ կայուն տնտեսության հետագա հիմնախնդիրների: Պարտքերը վաղ թե ուշ տեղափոխվում են այլ ոլորտներ, օրինակ՝ հիփոթեքից վարկային քարտերի կամ հակառակը: Եվ մենք արդեն դրա ականատեսն ենք:

